

ՅՐԱՆՍԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ (1899—1914)

Ս. Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

Պատմական հայրենիքից դուրս հաստատված հայկական միջավայրի կրթության, լուսավորության, ազգային ոգու, պատմական հիշողության պահպանման և զարգացման համար առանձնակի դեր է կատարում տվյալ գաղթավայրի մամուլը: Առավել ևս, երբ խոսքը վերաբերում է այնպիսի կազմակերպված ու ձևավորված գաղթօջախի, ինչպիսին Ֆրանսահայ գաղութն է: Ցավոք, թե՛ Ֆրանսիայի հայ գաղթօջախի, թե՛ այնտեղ հրատարակվող պարբերականների իրական պատմությունը տակավին չի ուսումնասիրված: Մինչդեռ, ինչպես գաղթօջախի, այնպես էլ Ֆրանսահայ պարբերական մամուլի ուսումնասիրությունը կլրացնեն մեր պատմության բաց էջերից մեկը:

1899—1914 թթ. Ֆրանսիայում լույս է տեսել 19 անուն հայ պարբերական: Իրենց բազմազանությամբ (մեծ մասը գրական-գիտական), արժարժած հարցերի հրատապությամբ և առաջադրած խնդիրների նշանակությամբ: Կարելի է առանձնացնել դրանցից երկուսը՝ գրական-գիտական ամսաթերթ «Համալսարանը» և ազատական, անկախ շաբաթաթերթ «Հայ կյանքը»:

«Համալսարանը» (1899—1902 թթ., Փարիզ) հիմնադրել են Միսաք Պաղասարյանը և Հովհաննես Շավարշը: Նրանցից առաջինի մասին քիչ բան է հայտնի: Պաղասարյանն աշխատակցել է Կ. Պոլսի «Բյուզանդիոն», Փարիզի «Ժամանակ» և Թիֆլիսի «Մշակ» պարբերականներին, ապա Հովհ. Շավարշի հետ ձեռնամուխ է եղել «Համալսարանի» հիմնադրմանը, ունենալով, ինչպես ինքն է ասում, ընդամենը «երկու ուսանողների խիստ անձուկ բյուզեն»¹: «Համալսարանի» փակվելուց շուրջ տարի անց՝ 1906 թ., նա Ատոմ Շահենի և Արշակ Մինասարյանի հետ հիմնադրել և խմբագրել է Փարիզի ՀՀԴ ուսանողների «Նոր Հանդես» պարբերականը:

Այլ է պատկերը Հովհ. Շավարշի դեպքում: Նրա վաղաժամ մահը լայն արձագանք է գտել «Համալսարանի» էջերում (անդրադարձ կա նաև «Հայ կյանքում»), որտեղից էլ տեղեկանում ենք, որ նա ծնվել է 1877 թ. Թոքատում (Եվդոկիա): Ապրել է նյութապես ոչ դյուրին կյանքով, կրթություն ստանալու նպատակով մեկնել է Փարիզ, սովորել և միաժամանակ աշխատել իշխան Գ. Լուսինյանի մոտ՝ իբրև քարտուղար, ինչը շատ է խանգարել նրա ծրագրերի իրականացմանը: «Ախ, եթե քիչ մը դյուրություն ունենայի ապրիլ կարենալու համար, այն ատեն ինչեք չէի ըններ»²,—գրել է նա: 1899 թ. աշխատակցել է «Մշակին», ապա, ինչպես ասվեց, Մ. Պաղասարյանի հետ հիմնադրել «Համալսարանը»: Մահացել է 1901 թ.:

«Համալսարանը» լույս էր տեսնում ամիսը մեկ անգամ, սկզբնական շրջանում մեկ ու կես մամուլ ծավալով (բաժնեգիրը կանխիկ էր, տարեկան լույս էր տեսնում 12 համար): Նրա բաժինները և նյութերը լիովին համապատասխանում էին ընտրած ուղուն և առաջ քաշած ծրագրերին: «Համալսարանի» նշանաբանն էր «Բնությունը միշտ քանդող, գիտությունը վերաշինող»: Այս վերջինին դիմելու է, առաջինին տիրելու համար»³:

1 Համալսարան, 1899, № 1:

2 Նույն տեղում, 1901, № 3:

3 Նույն տեղում, 1899, № 1:

Ամսաթիվի հիմնական աշխատակիցները իրենք՝ հիմնադիրներն էին։ Հովհ. Շավարշը հանդես էր դալիս Հրուշան, Արամ, Սոգ-Պետ, Յի-Շե-Սա, Նշան ծածկանուններով։ Ամսաթիվին աշխատակցում էին նաև Գևորգ Մկրտիչյանը, Վահրամ Պեքյաբյանը, Տիգրան Դիմաքսյանը, Սորբոնի համալսարանի օգնական-գրադարանագետ, «Համալսարանի» արտոնատեր, դոկտոր Շարլ Պոլին։ Պարբերականն իր գործակալներն է ունեցել Ամերիկայում, Ախալցխայում, Թավրիզում, Երզնկայում։

Ամսաթիվի № 1-ում տպագրված առաջնորդող հոդվածը, որը վերնագրված էր «Պետքը կը ծնի», մանրամասն ներկայացնում է «Համալսարանի» դիտական և գրական ուղղությունն ու խնդիրները։ Համաձայն չլինելով այն մտքին, թե «չենք կրնար շատը ձեռք բերել՝ քիչն ամբողջությամբ» և պնդելով, որ «գիտություններն անմատչելի չեն անմշակ մտքերուն», խմբագիր-հրատարակիչները նպատակադրվել էին առաջին հերթին զարգացնել միտքը «գիտական և գրական պաշարով մը»։ Նրանց կարծիքով, «Համալսարանի» և ընդհանրապես մամուլի դերը այս գործում մեծ է ու պարտավորեցնող, քանի որ «մամուլը ժողովրդի ղարոսն է», նրա մտածելակերպի հայելին։

«Համալսարանի» էջերում տեղ գտած նյութերը կարելի է խմբավորել հետևյալ բաժիններում։

1. Գիտական, որտեղ խոսվում է ընդհանրապես գիտական տեսությունների, գիտության տեղի ու դերի, գիտությունների զարգացման ուղիների մասին։ Այն վարում էին Մ. Պողոտասարյանը, հանքաբանական բարձրագույն վարժարանի աշակերտ Գ. Մկրտիչյանը և Գարեգին Գ. Մեծատուրյանը*։ Այս բաժնի նյութերը, որպես կանոն, ծավալով շատ մեծ էին, այդ պատճառով էլ զետեղվում էին իրար հաջորդող մի քանի համարներում։

Առանձնակի հետաքրքրություն էին ներկայացնում «Գիտություն և գյուտ 19-րդ դարու մեջ» և «Գիտությունները մեր մեջ» հոդվածաշարերը, որտեղ խոսվում էր գիտության առանձին ճյուղերի զարգացման, դրանց հնարավորությունների ու օգտակարության մասին։ Սա մի յուրօրինակ դիտական ծաղկաբաղ էր, որի նպատակն էր ոչ միայն ցույց տալ, թե «ինչ հառաջագիմություն ըրած» է գիտությունը և ինչպես է այն ծաղկեցրել «քաղաքակիրթ քաղաքական»⁴, այլև օգնել մեր ժողովրդին՝ չկորչել «գիտություններու անհունության մեջ», քանի որ, հրատարակիչների համոզմամբ, այսուհետև ժողովուրդների բախտն ու գոյությունը կախված են գիտության զարգացումից և ապրելու են կոչված այն ժողովուրդներն ու ազգությունները, որոնք «կը բարեշրջվին ժամանակին պահանջներու համաձայն»⁵։

2. Գրական բաժինը վարում էր Հովհ. Շավարշը։ Այն ներառում էր նաև «Բանաստեղծություններ» շարքը։ Բաժնի առանցքը կազմում էր «Գրելու արվեստը» հոդվածաշարը, որի վերնագիրն իսկ հուշում է, թե ինչ խնդիրներ էր այն վերհանում և ինչ նպատակների ծառայում։ «Գրելու արվեստը» Հովհ. Շավարշը ներկայացնում էր Սոգ-Պետ, իսկ «Բանաստեղծություններ» շարքը՝ Շավարշ-Հրուշան ծածկանուններով։ Վերը նշված կեղծանուններով նա տպագրում է զանազան բարոյախոսական, առողջապահական, հոգեբանական հոդվածներ՝ «Բարիի գաղափարը», «Գեղարվեստ ու գրականություն», «Պարտավորություններ», «Դաստիարակիչ գիտությունը», «Տեսություն մը տգեղ երևույթների», «Նկատողություններ» և այլն։

Մտորելով հասարակության մեջ տիրող բարքերի ու կենցաղի շուրջ, Շավարշը փորձում է հաստատել, որ հնագույն ժամանակներում ծնունդ առած «Բարիի և չարի գաղափարը» որոշակի դեր են խաղացել քաղաքա-

* Գարեգին Գ. Մեծատուրյանը հետագայում սկսում է հրատարակել «Գութան» (1901—1905 թթ.) պարբերականը։

⁴ Համալսարան, 1900, № 2։

⁵ Նույն տեղում։

կրթության հետագա զարգացման գործում: Ցանկանալով բարելավել հասարակությանը՝ նա կոչ էր անում «առողջ ու հիմնավոր դաստիարակություն մը տալ մեր նոր սերունդին»⁶: Շավարշի համոզմամբ, այս գործում մեծ է գիտության դերը, որը նա անվանում է «դաստիարակիչ գիտություն», քանի որ մարդկության մտավոր դաստիարակության մեջ այն «կը խաղա գլխավոր դեր մը»⁷:

3. Յեխեկիական կամ «աբենետական» բաժինը ծանոթացնում էր տեխնիկական բոլոր գյուտերին, հանգամանորեն անդրադառնում դրանց դրական արդյունքներին (հեռախոս, օդանավ, հեռագրական գյուտ և այլն): Այս շարքի նյութերի մի մասը տրվում էր «կարևոր գիտելիքներ» ենթաբաժնում, որը կարելի էր անվանել նաև «ժողովրդական բժշկություն», ինչպես նաև «օգնություն գյուղատնտեսին», քանի որ շարքը կառուցվածքով բազմաբնույթ էր (անհրաժեշտ կենցաղային օգտակար խորհուրդներ էր տալիս):

«Համալսարանը» առանձին բաժնով անդրադառնում էր կրթական և մանկավարժական խնդիրներին: Այն վարում էին ֆրանսիացի հայտնի գիտնականներ և դասախոսներ, նրանց թվում նաև Շարլ Պոլիեն: Բաժինը ծանոթացնում էր Ֆրանսիայի կարևոր ուսումնական հաստատությունների գործունեությանը (Սորբոնի համալսարան, Ֆրանսիայի առևտրական վարժարաններ, դպրոցությունների ֆակուլտետ, բարձր ուսումների վարժարան և այլն), գրանցում գործող ծրագրերին, ընդունակությանը և դասավանդման կարգին: Այս առումով «Համալսարանը» հայ ուսանող երիտասարդության ուղեցույց-խորհրդատուն էր և նպատակադրվել էր սատարել նրան, որ «չկորչի և շտուգվի կյանքի այս դաժան հորձանուտում»⁸:

Վերջին բաժնի հետ անմիջականորեն ու սերտորեն շաղկապված էին առողջապահական ու դաստիարակության խնդիրներին նվիրված բաժինները: Ամսաթերթի հրատարակիչներն այն կարծիքին էին, որ սխտք է աճեցնել ոչ միայն բանիմաց, այլև առողջ ու դաստիարակված սերունդ: Ցանկանալով ապագա մարդուն փրկել անտարբերության աղետաբեր հետևանքներից, որոնք «տգիտության և անասնության կը տանին»⁹, նրանք քննարկում էին դպրոցական հիգիենայի, սանիտարական վիճակի ու հասարակության վրա միջավայրի ազդեցության ժամանակի ցավոտ խնդիրները, տալիս անհրաժեշտ խորհուրդներ:

Ուշագրավ են «ազգային մտավոր գործիչներին» նվիրված գնահատականները (Մխիթար Սեբաստացի և Մխիթարյաններ, Մ. Մամուրյան, Խ. Աբու-յան, Բ. Պերպերյան...): Պարբերականը գնահատում էր նշված անձանց ոչ միայն գրական, այլև հասարակական գործունեությունը և ընդգծում, որ վերջիններս, չչփոթելով «կրոնն ու ազգայնությունը», անձնուրաց ու հարատև նվիրվել են ժողովրդի առաջադիմության գործին: «Մեր պաշտած կուրքերը թող նրանք լինեն,—հայտարարում է «Համալսարանը»¹⁰:

«Համալսարանի» բոլոր համարները եզրափակում էր ֆրանսերեն նույնահունչ բառերի և նրանց հայերեն բացատրությունների ենթաբաժինը, որը փաստորեն յուրօրինակ ֆրանսերեն-հայերեն բառարան էր:

«Համալսարանում» ինքնատիպությամբ առանձնանում են երկու հոդվածաշար: Առաջինը Հովհ. Շավարշի «Մամուլը» շարքն է, որտեղ հեղինակը փորձում է բացատրել մամուլի դերն ու կարևորությունը, «իբր օգուտներն ու վնասները տարբեր պայմաններում մեջ, մամուլը շեղբաղնելու միջոցները»¹¹: Մամուլը համարելով ժողովրդի դպրոց, նա շեղտում է, որ այն «անվիճելի

6 Նույն տեղում, 1900, № 3:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում, 1899, № 1:

9 Նույն տեղում, 1901, № 4:

10 Նույն տեղում, 1900, № 4:

11 Նույն տեղում, 1899, № 1:

կերպով պիտանի է ժողովուրդի մը զարգացումի տեսակետով¹²։ Նրա համոզմամբ, մամուլը լայնատարած ու հոծ ցանց է և նման է «էլեկտրական զորավոր մեքենայի»։ «Եվ երբ շարժումին մեջ կը գրվի մեքենան, իր ներգործությունն անմիջական կը լինի ամեն տեղ»¹³։—ասում էր նա։ Ավելին, լինելով ժողովրդի շահերի «թարգմանն ու պաշտպանը», մամուլը պետք է լինի նաև «բացարձակապես անաշու ու իրավապահ»։ Ըստ Շավարշի, եթե խրմբագիրներն ու աշխատակիցները հմուտ են և լավ դիտեն իրենց գործն ու իրենց ներկայացվող պահանջը, ապա «մամուլն իր ցանկալի դերը»¹⁴ կունենա։

Մտորելով այն հարցի շուրջ, թե որքանով է մամուլը գործնականապես ծառայում ժողովրդին, Շավարշն ասում էր՝ «Մամուլը մեր մեջ հանրության օգտակար ընկու անհրաժեշտ էական պայմանն է՝ բովանդակել ղտյն ժողովուրդին ավելի ծանոթ նյութերով»¹⁵։ Այս ընդհանուր ծանոթագրությունից հետո, Հովհաննես Շավարշն անցնում է հայ մամուլի խնդիրների քննարկմանը, ընդգծելով, որ այն մնացել է «միևնույն հնամուլ սահմաններուն մեջ», այն է՝ զբաղված՝ է օրագրությամբ, և, որ ավելի ցավալի է, ջլատված է անձնասիրական շահերի ու կապերի հետևանքով։ Ահա այստեղից էլ եզրակացնելով, որ հայ մամուլը «հիվանդ է», նա պնդում է՝ «մենք պետք շունինք հիվանդ մամուլի», մեզ անհրաժեշտ են «առողջ զաղափարներով տոգորված մամուլ մը, որ կարենա իսկույն արձագանք լինել հանրության իրավացի պահանջներուն»¹⁶ և «բաշտողը առաջնորդներ», որոնք կծառայեն ժողովրդի շահերին։ Հեղինակն ավելացնում է, որ կարող են առարկություններ լինել նաև այն հարցի շուրջ, թե հայ մամուլի նյութը ոչ բոլորին է հետաքրքրում։ Նա առաջարկում է հայ «թերթերն ու հանդեսները» հագեցնել այնպիսի «նյութերով, որ նրանք կարողանան գրավել բոլորին ուշն ու ուրուշը»¹⁷։ Այս առումով, նա բավական պահանջկոտ է գիտական մամուլի նկատմամբ, որը ոչ միայն պետք է «ավելի զարգացնող նկարագիր ունենա», այլև պետք է նպաստի «մտքերու ուժեղացմանը»։ Ընդ որում, ըստ նրա, այս հարցում մեղ կարող է օգնության հասնել օտար մամուլը, որից կարելի է ընտրովի ծաղկաբաղ անել։ «Մեր խոնարհամտությունը թող ըլլա օտարներեն փոխ առնել՝ ինչ բանի որ կարոտ ենք»¹⁸։—ասում էր նա։

Ամփոփելով հոգվածաշարը, Հովհ. Շավարշը եզրակացնում է, որ թերթ հրատարակելն էլ գործ է, և որպեսզի մենք ունենանք «չափված ու ձևված» մամուլ, անհրաժեշտ է, որ նրանց խմբագիրներն ու հրատարակիչները «անոր արդյունքովը ապրին»։

Սյուս հոգվածաշարը կոչվում է «Հայ կղերը և գիտություն»։ Շարքի հեղինակ Մ. Պաղտասարյանը փորձում է գնահատել հայ կղերականության դերը գիտության զարգացման գործում։ Նրա համոզմամբ, հայ կղերը և եկեղեցին դարձրել են ոչ միայն ժողովրդի «բարոյական հենարանը», այլև կրթության խթանիչը։ Այս գնահատության համաձայն էր նաև Հովհ. Շավարշը, որը հին շրջանի «կրոնականությունը» համարում էր առաջադիմության, ջատագով¹⁹։ Միևնույն ժամանակ նրանք ցավով արձանագրում են, որ այժմ «կղերականությունը դիմած է դեպի տգիտության խավարը»²⁰։ Դա վերաբերում է նաև Մխիթարյան միաբանությանը, մինչդեռ Սեբաստա-

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում, 1901, № 3։

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում, 1900, № 4։

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում։

ցու օրոք այդ հաստատությունը հայ ժողովրդին դարձրեց «Արևելքի ցեղերու ամենն հառաջագիմը և ամենն քաղաքակիրթը»²¹, Հեղինակների կարծիքով, հիմա առավել քան երբևէ, պետք է, որ կղերականները աջակցեն ժողովրդին և հաշտեցնեն «կրոնքը գիտության հետ»։ Այդ նպատակով Մ. Պաղտասարյանը և Հովհ. Շավարշը առաջարկում են «ցնցել հայ կղերականությունը», որպեսզի նա կատարի իր «շատ սուրբ ու նվիրական պարավորությունները» և նորից դառնա հայ գիտունների պաշտպանը։

Ինչպես ժամանակի մյուս պարբերականները, «Համալսարանը» ևս ունեւ ծանուցումների, նամակների և հայտարարությունների բաժին, որտեղ ներկայացվում, քննարկվում ու քննադատվում էին նաև ժամանակի հայ պարբերականները, տրվում էր նրանց բնութագիրն ու գնահատականը²²։ «Համալսարանը» գոյատևեց մինչև 1902 թ., ունենալով հրատարակության երկու շրջան։ Այդ ընթացքում նա հիմնեց սեփական տպարան, ինչը հնարավորություն տվեց նվազեցնել ամսաթերթի գինը և դրանով իսկ ընդլայնել ընթերցողների շրջանակը։ Առավել կարևորը՝ նա առաջ բերեց բավական գնահատելի մի շարժում, որը պետք է վերջ դներ անտարբերությանը և «վաներ տգիտությունը»։ Նրա ընթերցողներն էին տարբեր դասակարգի ներկայացուցիչներ, «գիտության և հառաջագիմության ծարավի ընտրյալ մարդիկ»²³, «Համալսարանի» հիմնադրումն ուրախությամբ են ողջունել «Բազմավեպը», «Հանդես Ամսօրյան», «Արմենիան», «Հայելին»։ Սա, անշուշտ, հնարավորություն է տալիս պնդելու, որ ամսաթերթն ըստ արժանվույն գնահատել են ժամանակի նմանատիպ պարբերականների շարքում²⁴։ Ամսաթերթը բարձր է գնահատել նաև կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը, որը «Համալսարանի» օրինակները ստանալով, 1901 թ. հոկտեմբերի 18-ին հատուկ կոնդակով դիմել էր նրա հրատարակչներին. «Որդեակ հոգևոր, առ ոչինչ համարեալ զարգելաոթ հանգամանսն եւ նիւթական սուղ միջոցս՝ ի սէր կրթութեան, յառաջադիմութեան եւ զարգացման Ազգիս, յանձն առին քրտնաջան վաստակօք օր ըստ օրէ ճոխացուցանել զգրականութիւն մեր՝ յաշտ օտարաց բարձրացուցանելով զայն, ի թիւս որոց եւ պատուական հանդէսն Ձեր ըստ ամենայնի օգտակար եւ պիտանի յաղագս ընթերցող հասարակութեան»²⁵, «Համալսարանի» դիպուկ գնահատականը տալիս է «Հայ կյանքը». «Համալսարանը» գեղեցիկ դեր մը ստանձնած էր իրապես համապատասխան այն միջավայրին, ուր լույս կը տեսներ։ Բարձր էր անոր ձգտումը ու գեղեցիկ նպատակը, բայց ինչ օգուտ, որ այդ հանդեսն ալ անհետացավ հրատարակության պայմաններու դժնդակության շնորհիվ²⁶։

1913—1914 թթ. Փարիզում հրատարակվում էր «Հայ կյանք» անունը կրող պարբերականը, որի առաջին համարը լույս է տեսել հոկտեմբերի 25-ին։ Մինչև 1914 թ. հունվար այն հրատարակվել է ամիսը երկու անգամ, իսկ այնուհետև դարձել շաբաթաթերթ։ «Հայ կյանքի» խմբագիրն էր Մ. Գուսմանյանը, հիմնադիր տնօրենը՝ Կ. Հ. Ներսեսյան, հովանավորողը՝ Ա. Կոլին-Նորիերը։ Ցավոք, որևէ տեղեկություն նրանց մասին մեղ հայտնի չէ, սակայն շաբաթաթերթում տպագրված նյութերի բովանդակությունից կարելի է մակաբերել, որ հրատարակիչները մտահոգված էին ոչ միայն ֆրանսահայ հասարակության, այլև ամբողջ ժողովրդի ճակատագրով և ջանում էին հայ ժողովուրդը միաբանված տեսնել և անկախ՝ կուսակցական պատկանելությունից։

21 Նույն տեղում։

* «Համալսարանը» անդրադառնում է Գ. Մեծատուրյանի «Գութանին», Կ. Բասմաջյանի «Բանասերին», Ե. Օտյանի «Ազատ խոսքին» և այլն։

22 Համալսարան, 1901, № 12։

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում, № 2։

25 Հայ կյանք, 12. III. 1914։

Պարբերականն իր բնույթով անկախ, ազատական էր։ Իր հրապարակ գալու մասին «Հայ կյանքը» տալիս է հետևյալ պարզաբանումը. «Գալիս է տեսնել, թե Փարիզի նման միջավայրում, որտեղ ապրում և գործում են Ա. Չոպանյանը, Մ. Չերազը, Կ. Բասմաջյանը և որտեղ կա ռեյտիստիկայի բարձրագույն հայ գաղութ մը», որը կարող է «ծնունդ ու սնունդ» դառնալ բազմաթիվ հանգևորների համար, հայերը նույնիսկ մեկ թերթ էլ չունեն։ Ուստի, «թերթին նպատակը պակաս մը լցնել, պահանջի մը գոհացում տալն» է, գաղութի ցրված հայության մեջ ամրացնելով «իրենց ծագման կապը»²⁶։ Պարբերականին աշխատակցել են Մ. Ս. Դավիթ-Բեկը, Հ. Սուրենյանը, Թ. Էմիրճիհանը, դոկտ. Ռ. Ռոպինսոնը, Նաղաշ Լճեցին, Հայկակը, Հայրենասեր Պերճը, Ատոմը, Տյուվիթը, Վանմիրը, Հայկ-Արամը, Շարլ Ռիվերը և ուրիշներ։ «Հայ կյանքի» բաժիններն էին՝ 1. Ավանդական առաջնորդող հոգևած, որը նվիրված էր փարիզահայ կյանքին։ 2. Հայկական հարցի խնդիրը լուսաբանող տեղեկատվություն կամ պաշտոնական անձանց հայտարարություններ ու փաստաթղթեր։ 3. Բանասիրական։ 4. Բժշկական։ 5. Հայտարարություններ։ Բանասիրական բաժինը վարում էր Մ. Ս. Դավիթ-Բեկը։ Բաժնում տեղ են գտել թարգմանություններ, ինչպես օրինակ, «Քոստվոյի ճակատամարտը» (սերբական դուցազներգությունը), «Զեյթունի փառքը» (Զեյթունի հերոսական կյանքից դրվագներ) և Հ. Սուրենյանի «Անահիտ քրմուհի» բանաստեղծությունը։

Բժշկական բաժինն անդրադառնում էր բժշկության ասպարեզում կատարված նորություններին։ Բժշկական և բանասիրական բաժինները շատ փոքրածավալ էին, ինչը ոչ թե հետևանք էր թերթի հրատարակիչների կամ խմբագրի անտեղյակությանն այդ մարզերին, այլ, մեր համոզմամբ, արդյունք էր վերջիններիս բոլորովին այլ նպատակ ունենալուն, այն է՝ օգնել ֆրանսահայ բալական մեծաբանակ գաղութին միաբանվելու, քանի որ «այսօր Փարիզի հայ գաղութը առանց նավի ու լաստոսփայտի խեղդվելու վտանգի առաջ է»²⁷։ Ընդհանրապես ֆրանսահայերի ներքին կյանքը մշտապես մտահոգում էր «Հայ կյանքին», ուստի, դրեթե բոլոր առաջնորդող հոգևածներով պարբերականն սնորհալուծում է այդ խնդրին։ Այդ նյութերից տեղեկանում ենք, որ Փարիզում սրղեն իսկ 1913 թ. գործում էր ռեյտիստիկայի բարձրագույն հայ գաղութ մը՝ իր սոցիալական բազմաշերտ կազմով։ Այստեղ կողք կողքի ապրում ու գործում էին և՛ ուսանողներ, և՛ վաճառականներ, և՛ մտավորականներ։ Սակայն «ֆրանսական ուստախին մեջ» նրանք ապրում և գործում են ցցիր ու ցան, մեկ մեկ անկյուն մտած», որի հետևանքով ճշգրիտ հայտնի չէ նույնիսկ Փարիզի հայ համայնքի թիվը²⁸։ Այս տարանջատվածությունը «անպարկեշտ» վարքի ու գործողությունների է հանգեցնում, որի պատճառով փոխվում է օտարների վերաբերմունքը հայերի նկատմամբ։ Եվ ի՞նչ մեր բոլոր մեղքերուն վրա՝ ղզվելի ազգ մ'ալ դառնանք, ալ ինչ պիտի ըլլա մեր վիճակը, մենք որ բոլոր մարդոց համակրանքին պիտի ունինք, քանի որ հայրենիք չունինք, և նույնիսկ աղագային միություն մո յունինք»²⁹։ Այս վիճակից դուրս դալու համար հրատարակիչները միայն մեկ ճանապարհ էին տեսնում՝ հետևել բուլղարացիների օրինակին ու համախմբվել հայ եկեղեցու շուրջ։

«Հայ կյանքը» անդրադառնում է նաև ֆրանսահայ մշակութային առօրյային, որին նվիրված առաջին բազմում է հայոց գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյակին նվիրված տոնախմբության լուսաբանությամբ։ Տոնահանդեսը կատարվել է 1913 թ. հոկտեմբերի 25-ին՝ Փարիզի Հայ ուսանողաց միության նախաձեռնությամբ, Սորբոնի Ռիշելյե սրահում՝ Մ. Լիարդի

²⁶ Նույն տեղում, 25. X. 1913.

²⁷ Նույն տեղում, 12. III. 1914.

²⁸ Նույն տեղում.

²⁹ Նույն տեղում, 16. XI. 1913.

պատվավոր նախագահությամբ: Ներկա են եղել շուրջ 400 հայեր և բավական թվով ֆրանսիացիներ: Ներկաների թվում էին եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշան իր որդու հետ, բանախոս Դավիթ-Բեկը, Ա. Չոպանյանը, Խարսեղ Շահպազը և ուրիշներ: Շարքի մյուս մասը, որը վարում էին Նադաշ լճեցին և Հայկաիր, կոչվում էր «Գեղարվեստի մեր մեջ»: Նրանք ոչ միայն խիստ մտահոգված էին անտարբերության մատնված արվեստի առանձին ճյուղերի ճակատագրով, այլև մշակութային կյանքի աշխույժը ապահովելու նպատակով կոչ էին անում ստեղծել «պղտիկ ֆոնդ մը» Մինաս Զեբաղի, Արշակ Չոպանյանի, Միքայել Վարանդյանի և Տիգրան Նսալանի մասնակցությամբ: «Հայ կյանքը» առանձնակի ուշադրություն է դարձնում հայ երիտասարդության հայրենասիրական դաստիարակության խնդիրներին: Այդ նպատակով շաբաթաթերթը տպագրում է բաղմամբիվ դաստիարակական ու հայրենասիրական հոդվածներ. որտեղ հաստատվում է այն միտքը, թե հայրենիքն ու լեզուն մեր ամենաթանկ հարստությունն են և ազգի պահպանման կարևոր պայմանները, քանի որ հայրենիքը «մեզ կը ծնի, նյութական և մտավոր էության անհրաժեշտ եղող սննդական, մտավորական և բարոյական պետքերը կը հոգա, կը սորվեցնե մեր լեզուն, մեր բարքերը, մեր ցեղային հատկանիշները»³⁰: Միաժամանակ, ուրախությամբ արձանագրվում է, որ «վերջապես այսօր» մենք ունինք ազգային առողջ գաղափարներով սնված գիտակից երիտասարդություն:

Շաբաթաթերթն առանձնակի ուշադրությամբ ներկայացնում և քննարկում է 1912—1914 թթ. հայկական բարենորոգումների խնդիրը: Դրա լուսաբանմանն են նվիրված ոչ միայն բաղմամբիվ հոդվածներ, ինչպես, օրինակ՝ «Հայուն աստղը կը պլպլա», «Արձագանք», «Հայկական հարցի շուրջ», «Հայկական հարցը, ի՞նչ կ'ըսե խոհականությունը», այլև հաշվետվություններ, գեկուցագրեր, ծրագրեր: Քննության առնելով այդ խնդիրը, շաբաթաթերթը փորձում է ցույց տալ, որ մեծ պետությունները այն շահարկում էին՝ իրենց քաղաքական շահերից ելնելով: Վախենալով, որ նոր ծրագիրը կարժանանա նախորդների ճակատագրին, «Հայ կյանքը» առաջարկում էր Եվրոպայում ստեղծել «զորավոր օրգան մը», որն ամեն վաղիցյան պետք է մերկացնի «թուրս մեզենաությունները», միաժամանակ ստիպելով մեծ պետություններին՝ ավելի հետևողական լինել այս հարցում: «Ջորավոր օրգանի» դերը պետք է ստանձնեն Փարիզում գործող Արևելքի ժողովուրդների համար կազմակերպությունը, որը սկսել էր հրատարակել «Պրո Արմենիա» թերթը: Հատկանշականն այն է, որ «Հայ կյանքը» թերահավատությամբ էր լցված հայկական բարենորոգումների իրականացման նկատմամբ, քանի որ, ըստ շաբաթաթերթի, առնվազն 100 տարվա դառը փորձն ապացուցել է, որ «Բ. Դըռնեն բարենորոգում սպասելը նույնքան հիմարություն է, որքան գետի մը հոսանքը եսսեղնել փորձելը»³¹:

Պարբերականը փորձում էր բացահայտել մեծ պետությունների շահերը: Եթե Ֆրանսիայի և Անգլիայի դեմ նա մեղադրանքներ չէր ներկայացնում, ապա Գերմանիայի նկատմամբ բացահայտ թշնամական դիրք էր զբաղում, հատարաբերելով՝ «Ո՛ւր դադար պիտի առնեն սերմաններու ձգտումները»: «Հայ կյանքը» հատուկ մերաբերմունք ուներ Ռուսաստանի հանդեպ: Նրա արժեքով, բոլոր պետություններից միայն Ռուսաստանն է, որ իսկապես շահագործված է հայկական բարենորոգումների իրականացմամբ: Ուշի-ուշով հետևելով բարենորոգումների խնդրի ընթացքին, պարբերականը կոչ էր անում չխանդավառվել: Ծիշտ է, Բ. Դըռն և Ռուսաստանի միջև «համաձայնությունն առոնե գոյացած է», սակայն դա չի նշանակում, որ հաղթանակը մոտ է, որովհետև ազդմուկը ոչ այնքան մեզ համար է, որքան ռը ամեն մարդ

30 Նույն տեղում, 21. I. 1914:

31 Նույն տեղում, 25. X. 1913:

իր ջրաղացը կը դարձնեն»⁸²։ Այս համոզմունքին էին ոչ միայն «Հայ կյանքը», այլև Եվրոպայի դաշնակցական ուսանողական միությունը, Եվրոպայի առաջադեմ մարդիկ։ Թե՛ ուսանողական միության համաժողովը, թե՛ Ասիայի Ֆրանսիական կոմիտեն (մասնակցում էին դոկտոր Լեփսիուսը, Օ. Կոննեբեր, Անտոն Զերմանը և ուրիշներ) իրենց բանաձևերում մեծ պետություններից պահանջում էին վերջնական լուծում տալ այդ խնդրին։

Ժամանակագրության տեսքով ներկայացնելով հայկական բարենորոգումների հետագա ընթացքը, շաբաթաթերթն արձանագրում էր, որ Կ. Պոլսից եկած տեղեկատվության համաձայն (20. I. 1914), Բ. Դուռը փոքրիկ փոփոխություններով ընդունել է բարենորոգումների ծրագիրը։ Ընդ որում, Թուրքիայի զիջողականությունն, ըստ «Հայ կյանքի», ունեւր իր հեռուն գնացող նպատակները, այն է՝ բաժանվող տարածքի մեծ մասը դնել Գերմանիայի հովանավորության տակ և Տրապիզոնի ընդգրկմամբ ավելացնել իսլամ բնակչության թիվը։ «Հայ կյանքի» վերջին համարում տպագրված է 1914 թ. փետրվարի 8-ի ռուս-թուրքական համաձայնագիրը, որը «ռուս դիվանագիտության հաղթանակը և հայուն փրկությունը պիտի ըլլա»⁸³, ինչպես ուզում էր հավատալ շաբաթաթերթը։

Անշուշտ, քննված սոսկ երկու պարբերականները չեն կարող լիակատար և ամբողջական պատկերացում տալ Ֆրանսահայ գաղթօջախի և պարբերական մամուլի մասին, սակայն կարելի է համարձակորեն պնդել, որ XIX դ. վերջի—XX դ. սկզբի Ֆրանսիայի հայ մամուլը, այդ թվում «Համալսարանը» և «Հայ կյանքը», իրենց վրա էին վերցրել ոչ միայն ժողովրդի լուսավորության, այլև ազատագրական գաղափարների, հայ դատի պաշտպանության խնդիրները։

АРМЯНСКАЯ ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ ФРАНЦИИ (1899—1914)

С. М. СААКЯН

Резюме

В конце XIX—начале XX вв. заметно активизируется периодическая печать армянских диаспор, среди которых особо выделяется Франция. В это время здесь выходило около 19 больших и малых журналов и газет, в числе которых определенное место занимали научно-литературная газета «Амалсаран» (1889—1902 гг.) и независимая газета «Ай кянк» (1913—1914 гг.). Каждая из них охватывает определенную сферу деятельности армянской диаспоры Франции и в то же время, взаимно дополняя друг друга, позволяет понять и осмыслить ее стремления и чаяния.

⁸² Նույն տեղում, 8. XII. 1913:

⁸³ Նույն տեղում, 21. I. 1914: